ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄ

Կիրակի, 17 Հոկտեմբեր 1976, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, Ս. Պատարագի ընթացքին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի ձեռամբ եպիսկոպոսական կարգ ընդունեց Ս. Աթոռոյս բազմամեայ և վաստակաւոր միաբան Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիկեանը:

Նորաձեռ Սրբազանը ծնած է Երուսաղէմ 1921ին, և զաւակն է բանասէր և պատմաբան Կարապետ Գաբրիկեանի, որ Մեծ Եղեռնէն ետք իր ընտանիքով ապաստանած էր Երուսաղէմ և կը պաշտօնավարէր նորաբաց ժառանգաւորաց Վարժարանին մէջ:

Աւարտելէ ետք Ս. Թարգմանչաց Նախակրթարանը, հետևած է Դպրեվանքի Ընծայարանի բաժնին իբրև ազատ ուսանող. 1950ին ձեռնադրուած է սարկաւագ, իսկ յաջորդ տարին՝ աբեղայ:

1952ին նշանակուած է Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ, 1953ին զայն ժժտելով Երկրորդականի բաժինով. Գերաշնորհ Սրբազանը այդ պաշտօնը կը վարէ մինչև այսօր:

Երուսաղէմի Պատրիարքութեան իբրև նուիրակ, 1954-1957 կը գործէ Հիւսիսային Ամերիկայի մէջ, ուրկէ կ'ընէ 1963-1964, Ս. Ցարութեան Տաճարի նորոգութեան հանգանակութեան համար: Հարաւային Ամերիկայի նուիրակ կը նշանակուի 1961ին, և ապա կրկին անգամ 1966ին:

1967ին Ս. Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն կը ստանայ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան:

Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս Երուսաղէմի մէջ զանազան պատասխանատու պաշտօններ վարած է, ինչպէս՝ անդամութիւն Տնօրէն ժողովի և Գանձատան Ցանձնախումբի (1957-1961), և կրկին անգամ 1973ին, վերահսկչութիւն Ս. Տեղեաց և Ս. Ցարութեան Տաճարի հայկական բաժնի նորոգութեան:

«ՍԻՈՆ», յանուն Սրբոց Ցակոբեանց Միաբանութեան, ջերմագին կը շնորհաւորէ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեանը, իրեն ցանկալով առողջութիւն և եկեղեցանուէր գործունէութեան բազմաթիւ տարիներ:

digitised by A.R.A.R.@